## 44. ԱՍԼԱՆ ՕՂԼԻՆ

Ժամանակին մեկ քյոր, էրկու ախպեր կէլնեն: Էնոնց քյոր կուտան զատու երկիր իրկան: Կմնա էրկու իրեքյ տարի վերջ, մեր կուլյն, կմոմռա, կասի. - Իլլյահ կնացեքյ մեյ խատ իմ ախչիկ պիրեքյ եւ տիսնամ:

Ախպերներ կէրթյան քյուրոջ տուն: Էնտեղ էլ մեկ ճղճթ կա, որ ուրենց խուրին չուր յոթն օր չեն խառցուցի՝ ո՞րտեղից ես իկե, ո՞րտեղ կէրթյաս, յան ո՞վ ես, ի՞նչ կուզես:

Կմնան, յոթ օր կթմմի: Քյուրոչ իրիկ ախպերներաց կխառցուցե. - Ի՞նչի եքյ իկե:

Կասեն. - Իկիր ենքյ մեր քյոր կտանենքյ մեր տուն խուր:

- Ծատ աղեկ, - կասեն, - տա՛րեքյ, ամա չոտ պե:

Ջունքյի կիտեն իրենց խարս տղով ի:

Ախպերներ կառնին ուրենց քյոր, կուգյան: Կուգյան ճամբան, կնգան ցավ կտեպնին:

Ախպերներաց ախչիյն կասի. - Քիչըմ առաճացեքյ, ես էսա գյետի վերեն լվացվեմ, կուգյամ քյե կխասնեմ:

Ախպերներ միամիտ կէրթյան: Կտիսնան քյոր չատ կյանգյնանա:

Մեյն կասի. - Էրթյանքյ իտև:

Մեյն էլ կասի. - Չէ՛, քալքյի կարևոր պետք կա:

Դեռըմ կմնա, քյոր լաճ տղեմ կպիրի, կկռնդխի, կտանի, կթյալի մեռչիմ մեջ, կէրթյա ախպերներաց կխասնի:

Կմեյտեղվին կէրթյան խոր տուն:

Մենքյ գյանքյ վեր տղին:

Կնիկ որ կռնդյախ կթյալի մեռչեն, ապլանմ ուր ծագյերաց ծիծ կուտա, աչք վեր իսոր կէլնի: Աստծուց ուհմ կինի մեջ հյայվնի սրտին, տղեն որ կուլա, կէրթյա տղին էլ ծիծ կուտա:

Ամիսմ էրկու ըսհա կընցնի: Մեկ օր նախրչին ուր նախիր կառնի կուգյա սար կարածա, կտիսնա ապլանմ մեռշից կփյախնի: Նախրչին կէրթյա կյառյաճանա, կասի. - Հեմ ի՞նչ էր ապլան կայնիր էր էնտեղ:

Կէրթյա կտիսնա մեյ հատ կռնդըլխուկ տղա, պետ, կարմիր խորոտ լաճմ: Կասի՝ հյաքյի իմ տղեն մեռավ, էսա տղեն տանեմ էնոր տեղ:

Տղեն կառնի, կէրթյա տուն, կասի. - Կնի՛կ, մեր տղեն աստված էլ մ՚էլ իտուր:

Ախչիկ, որ էկավ խոր տուն, սիրտ կմոմռեր, կիշեր-ցերեկ. հյա գյախսափկ

տեղրանքյ կուլեր: Մ'եկ օր կէրթա̈ կնստի փադյա̈խ. գյա̈խտիկ խաղ կասի. կույա̈. մեր կէրթա̈ կկսանի վեր դրան ականջ կանի.

- Ուրու՛ր. բալամ. ուրուր
Մեյն էր տեխ դողուն
Մեյն էր տեխ բա̈ռին բառստան:
Էն ինչ տեխ ղոշուն:
Էն գյառնով մաքյիթերուն.
Էն ինչ տեխ Բա̈ռին բառստան.
Էն կսրիք կուշ խավքյերուն:
Ուրու՛ր. բալամ. ուրուր,
Քյե տնեմ ոսկե ուրուրոց:
Վեր քյե քյա̈շեմ մարգյրտե ծածկոց.
Սարերաց ասլան քյե կերակրեր,
Վարթի բլբիլ քյե դարդար ասեր:
Խարուփ քյասմին քյե տաներ-պիրեր:

Մեր որ կլսի էսա երգ, կմտնի ներս. կշոռի վեր ախչկան. կասի. - Իլլայհ քյե ի՞նչ էլե պիտի զիկ ասես:

Ախչիյն էլ կասի. - Քյեզնից ի՞նչ պախեմ. քյո աստծուց. հալ հեքյաթ ըսհա էլավ: Ծամբախ էկա, ցավ պռնեց, ախպերներաց մոտից ամչցա, տղեն պիրի, տարա թալիցի մեռշի մեչն, էկա:

Մերն շոտըմ ուր տղեյներ կճամխի մեշեն, որ էրթա̈ն տղեն կնդնեն առնեն պիրեն:

Տղեյներ կէրթա̈ն, որ նա̈՛ տղա կա, նա̈՛ պյա̈ն: Նախրչին ա̈ռա̈ճուց զաթի տարիր էր պոծիր էր:

Կշախեն կճռճացուցեն. կանեն տսնխինգյ տարեկան: Լաճ շատ վոծով կէլնի. անունն էլ կտնեն Ասլան օղլի: Վիր խետ խաղա, որ տեղ զա̈րնի, զարկվի, հմենին կավցուցի, կլա̈ցուցի. հմեն օր էլ կուգյա̈ն վեր նախրչուն կոհիվ:

Օրին մեկ Ասլան օղլին նախրչուն կասի. - Աղա՛, հա̈քյի ես քյո լաճն չեմ. զի թող, ես էրթա̈մ աշխար փոամ. զի ապրուստ կնդնեմ, մնամ մո քյե ի՞նչ. որ խըլղ հա̈ գյա̈ վեր քյե կոհիվ:

Մեկ էրկու տիր Ասլան օղլին կասի, ամա նախրչին կասի. - Բալա՛մ, տյու իմ տղեն ես. ի՞նչխ կէրթա̈ս:

Ախր ի՞նչ կանի. չանի, վեր Ասլան օղլուն չկանա, կասի. - Կնա̈. աստված քյո պա̈ն ա̈ճողի:

Ասլան օղլին կէլնի կէրթա̈: Քյանիմ օր կմնա, նախրչու պստիկ լաճ կասի. - Աղա՛, ես էլ կէրթա̈մ Ասլան օղլու խետ, չեմ դնդրի:

Էն էլ կէլնի կէրթա̈ Ասլան օղլու իտև, կէրթա̈. կէրթա̈ կխասնի Ասլան օղլուն: Շատ կէրթա̈ն, քիչ կէրթա̈ն. կէրթա̈ն կխասնեն մե խատ անվերվերի դաշտի մը մեչ: Կտիսնա̈ն էն դեհեն պա̈րակ մուխմ կէլնի, կանեն էն մխուն կէրթա̈ն: Կէրթա̈ն, կտիսնա̈ն յոթ դև, յոթ կանթեն պղինձ տրիր ին վեր կրակին, յոթ խատ պրթոտ ոչխար կխաշեն, որ ուտեն:

Կվախենան կտա̈ռնան ետ: Կուգյա̈ն մեյ հա պառվու տուն մսաֆր կէլնեն: Պառվուն կասեն. - Էնա ի՞նչ յոթ դև են, էնա տեղ ծեր քյա̈ղքյի մեջ նստիր են:

Կասի. - Վալա՛, էնոնց մե հա քյուրմ կա, շատ խորոտ ի փախցուցիր են, առիր են եկիր են. էն դա̈շտի մեջ նստիր են:

- Է՛, պառավ. - կասի. - էն ախչիկ. էնոնց քյոռ. որ ուզեմ իմ ախպոր, կուտա՞ն:

Կասի. - Հե՜յ տնավե՛ր, խաւզար խատ քյե պեսներ իկեր են. գյլխներ կտրվե. մնացիր են: Դևեր մեկ պերթ գյլխե են շինե. մեյն էլ ջանդկե են շինե:

Կասի. - Պառա՛վ, էնոնց կմվլ-կրաւր ի՞նչ ]ւ:

Կասի. - Վայա՛. էնոնց կավլ-կրար էն ի, որ էնոնց կոճմ կա. ճղեն. ինոնց ճրի գյուռ շոճեն:

- Աղե՛յ, - կասի, - ես առատուն պիտի էլնեմ էրթամ էնոնց քյոր ուզեմ իմ ախպոր, յա՛ն աստված տա զիկ. յա՛ն տա՝ էնոնց:

Պառավ կասի. - Ջահե՛լ, մէրթաւ. քյո ջահելութեն ափսոս ի, քյե կուտեն դևեր: Ամա որ կէրթաւքյ կմտնեքյ ներս, որ խաւցի վերեն կէլնեն՝ պճրև չի տաքյ. որ չէ՝ պարև տվեքյ, նստեքյ:

Ասլան օղլին առատուն կէլնի. կառնի ուր ախպեր, կէրթա դևերաց տուն:

Պճրև կուտան, կնստեն. դևերն էլ խաց իքյրամ կանեն ինոնց, էնոնքյ էլ կայաթւան անութի են, կուշտ խաւց կուտեն:

Դևեր կխաւռցուցեն. կասեն. - Խողածին, ինչի՞ ես իկե:

Կասի. - Վալա՛, իկեր եմ քյո քյոր կուզեմ իմ ախպոր:

Ախչիյն էլ չիկիտե, որ ուր կուզե Ասլան օղլու ախպոր. կիտի կուզեն ուր Ասլան օղլուն. կասի՝ վալա. ես չեմ թողնե էսա ջահել կուրիսի:

Գյախտիկ մազն ուր գյլխուց կքյաշի. կուտա Ասլան օղլուն, կասի. - Որ իմ ախպերներ կոճ կուտան քյե կասեն՝ ճղի՛. էսա մազ թաւ վեր են պալթեն զար վեր մազին, կոճ կէլնի էրկու տապակ:

Ասլան օղլին կառնի, մազ կփաթյութի, կտնի ուր ջեռք:

Կմնա էն մէկել օր, դևերաց յոթն ախպոր ճոչ Ասլան օղլուն կասի. - Կիտե՞ս ինչ կա, մեր քյոր, որ տանքյ քյե, մե էրկու կմվլ կա, մեյն որ մեր կոճ ճղես, մեյն էլ որ մեր ճիւր խմելու գյուռ շոճես:

- Ծատ աղեյ, - կասի, - տվեքյ ծեր կոճ տիսնամ ճեմ ի՞նչ կոճ ի, որ ես չեմ կանա ճղե:

Կոճ կթալեն Ասլան օղլու առաճ, Ասլան օղլին ի կճախտիկ ջեռքեն ախչկան գյլխու մազ կխանի կթալի վեր կոճին. պալթեն կվերուցի, անուն աստծուն կասի. կզառնի վերեն, կոճ կէլնի էրկու տապակ:

Դևն կասի. - Աղեկ, էտա արի՛ր. դե արե էրթանքյ մեր գյուռն էլ շոճի:

Ասլան օղլին կէրթա տեխ գյուռ, ծեռ կթալի գյուռի տակ, մեյ խատ կվերուցի. աստծու անուն կուտա, գյուռ կշոճի:

Դևերն կասեն. - Խալալ էլնի քյե մեր քյոր: Քյոր կուտան Ասլան օղլու ախպոր, յոթ օր, յոթ կիշեր խարսնիս կանեն, կտառնան մեյտեղ կնստեն:

Հմեն օր Ասլան օղլին ինան դևեր կէրթան սար նեճիր անելու, նախրչու լաճ էնան դևերու քյոր կմնան տուն: Մեկ օր դևերաց քյոր նախրչու լաճու խետ կէլնեն կփռան էնոնց տուն: Քյառսուն խատ էօդա կա, եռսուն էս ինի տոռ կպանա՝ մեյ մեկ ակնունքյ, ոսկի. ջավահիր. ճարստութեն ի: Էն մեկ էօդի տոռ որ կպանա. կտիսնա մեյ խատ յոթ գյլխեն դև կող իրեքյ չորս տեղով ծակիր են. զնջլներ ընցուցեր են մեջ. էրկթե ցցեր զարկիր են պատ, կապիր են:

Խետ դևու աչք կինի մարթուն, կասի. - Ա՜խ, խողածի՛ն, թաճլա տու մեյ տաշտ խաւց, մեյ տաշտ գյինի պիրիր ես ուտի, խմի, էլավ եփուցի. որ նա՛ կիրիր եմ, նա՛ խմիր եմ:

Լաճն ի կէրթա. չկիտի ի՞նչ բաս ի, կպիրի տաշտմ խաց. տաշտս գյինի կտնի դնու ճռճն։ Դն կուտի. կխմի. կկշտանա. մեյ խատ ուր կժճժի՝ զնջիլի հմեն կտոր մեկ աշխար կցրվի։ Կէլնի չալափամ կզանի նախրչու լաճու ակնջի իտև. խելքյ կէրթա. սեռլի պես կինի գյետին։ Էն կառնի լաճու կնիկ. յահու-յալլահ կթռնի. կէրթճ կնիկ կտնի ուր տուն. ուր տան հմենից խորոտ էօդի մեչ կտնի կնիկ։ Հմեն օր. օր մեյ տուն կէրթա, կնիկ կվերուցի. ծաղկի պես կխոտոտա, կտնի գյետին։

Մենքյ տճտնանքյ տեխ ախպերներ։

Իրիկուն ի ախպերներ կուգյճն տուն. կտիսնան նախրչու լաճ խելամախ էլե, գյետ նստե, կասեն՝ ի՞նչ էյե. չկանա ջիյճբ տա։

Մեկ էլ դներաց ճոչ կվճզի տեխ Ջան Պոլստի էօդեն. կտիսնա. որ Ջան Պոլստ տաշտմ խաց կիրե. տաշտմ գյինի խմե, ուրենց քյոր առե փախե։ Կուգյճ Ասլան օղլուն կասի։

Ասլան օղլին կասի. - Տարե՛. թո տանի, զի քյառսուն օր օր տու, իմ ախպերն էլ թո կենա մո ծե, ամա իմ ախպոր չոռմ բիլմ չասեքյ. որ իմցա՝ իմ ախպոր պճմ եքյ ասե. ծե հմենին էլ մորթեմ։

- Աղե՛յ. - կսսի, - ծե քյառսուն օր օր տվի, չէկար՝ մենքյ կիտենքյ քյո ախպեր։

Ասլան օղլին ի կէլնի խացմ կտնի ուր չանթեն. կինի ճճմբճխ։ Շատ կէրթճ. քիչ կէրթճ. կէրթճ մեյ խատ քյաղքյի մեչ կէլնի դաշտ. կտիսնա, որ անձրև կուգյճ, գյետին շատ չամոտ ի։ Նախրչիմ ոտքեր չլտե, կովեր տվե ճռաճ կքշի. Էրկու խատ կով կա մեչ նախրին. որ չեն կանա քյելե։ Էրկսի պոչ կապե իրար, ճյբի բիչիմ. թնլե վեր ուփ թևին։

Ասլան օղլին կասի. - Վա՜յ, տո, քյո տուն ավիրի, էս ի՞նչ կուվաթ ի։

Նախրչին կասի. - Հե՛յ, տուն էլ պճն ես տիսե, կիտես թե Ասլան օղլին ի, որ դներաց կոճ ճղեց, գյոտ շոճեց. քյորն առեց ուր ախպոր խամա՞ր։

Կասի. - Ասլան օղլին ես եմ, ամա էտա կուվաթ չունեմ։

Նախրչին կպռնի կովերաց պոչից կթփի գյետին. կասի. - Ջճհնճ՛մ. նախիր դՌր կէրթճ. թող էրթճ, ես էլ կուգյամ քյո ինգյեր։ Կինի խետ Ասլան օղլուն, մեյտեղ կէրթճն։

Շատ կէրթճն. քիչ կէրթճն. կէրթճն մե հա մեռջի մը մեչ. կտիսնան մե հատ մարթմ չվան թճլե մեռշի օրթեն. չանքյ սարմ փետ կտռտե տրե վերեն, կանի որ պիտի շլկի։

Ասլան օղլին կասի. - Վա՜յ, աստված քյո տուն ավիրի խե քյո կուվաթին։

Կասի. - Հե՛յ, տուն էլ պճմ ես տեսե. կիտես Ասլան օղլին ի, որ դներաց կոճ ճղեց, զյոտ շոճեց։

Կասի. - Ասլան օղլին ես եմ, ամա քյո կուվճթ չունեմ։

Կասի. - Որ ըսկուն ի, ես էլ քյե ինգյեր։

Փետեր կթփի գյետին, կասի. - Ես էլ քյե ինգյեր։

Կէլնեն իրեքյ մեյ տեղ կէրթճն։ Շատ կէրթճն, քիչ կէրթճն, կէրթճն մեյ հա տճրի գյլոխ կխասնեն, կտիսնան մեյ հատ մարթ ճոչ գյութնի զնջել տրե ուփ ճռճն, մեյ ծերից պռնե, պըտ-պըտ կկտռտի։

Ասլան օղլին կասի. - Վա՜յ, աստված քյո տուն ավիրի խե քյո կուվաթին։

Կասի. - Դե, ջանմ, կիտես Ասլան օղլին ի, դներաց կոճ ճղեց. գյոտ շոճեց։

Կասի. - Ասլան օղլին ես եմ։

Կասի. - Ես էլ քյե ինգյեր:

Ասլան օղլին կասի. - Տղեյնե՛ր. դե՛ էկեք էսա տեղ. մե անուն դնենք: Ես որ կամ զաթի Ասլան օղլին եմ, նախրչու անուն կտնի Ինագյ Բողան* . մեոշի մեչի փետ շլկողի անուն կտնի Մեշա Սոքան** . զնջիլ կտոտողին կտնի՝ Զնջիլ Կոան*** :

Կելնեն չորս մեյտեղ կէրթըն: Շատ կէրթըն. քիչ կէրթըն. դաշտմ կխասնեն: Ասլան օղլին կասի. - Տղեյնե՛ր, նստինք էսա տեղ. մե խամար տուն տեղ էլնենք. ճա էրթընք դ՞ր:

- Աղե՛կ. - կասեն ինգյիրներ:

Ըմեկէլ առատուն Ասլան օղլին կասի. - Մենք իրեյս էրթընք սար՝ նեճիր անելու, Ինըգյ Բողան թո մնա տուն, կերակուր իփի:

- Աղեյ, - կասեն:

Իրենք կէրթըն սար. Ինըգյ Բողըն կմնա տուն: Կեսօրվա շքյեր որ կտըռնուան. Ինըգյ Բողըն կասի՝ «Գյախնի իրիկուն էլնի, մկա իմ ախպերներ կուգյըն. էրթըմ կեր իփեմ»:

Կէլնի պղինձ կտնի վեր օճխին, փլավ կիփի, փլավ կառնի իփել. մե ճատ կիրիշկա էնտեխ կտիսնա մեչ երկինք մեչ գյետինք պըմ կուգյա: Կմոտոխասնա, կտիսնա յոթ գլխեն դև Ջան Պոլատ գյեո կուգյը: Կուգյը կմոտոխասնա փլավ իփողին. կասի. - Մեյ տոր փլավ տուր, ուտեմ էրթըմ:

Մարթն էլ մարթ ի. կմարթանա, ճոչ շիրեփմ իլին կուտս, կասի. - Առ կե՛:

Ջան Պոլատն էլ Ինըգյ Բողընի ծեռնեն շիրեփ կառնի, ամենայն զորությամբ կզըռնի մեչ Ինըգյ Բողընի իրիսին: Ինըգյ Բողըն խելքամաղ կինի էնտեխ: Ջան Պոլատ ծեռ կխճի պղնձի մեչ, ծեռնով կխառնի. պղնձի բիթուն փլավ մեյ տիր կթըլի պերան, կէրթա: Աշխար ի՞նչ կըննըր որ պըրի կա. կտանի կկիրիցուցի յոթ դևու քյուրոչ:

Ինըգյ Բողըն կակխի, մոութ-մալուլ կնստի: Իրիկունի ախպերներ կուգյան. Ասլան օղլին կասի. - Ինչի՞ մե խամար կերակուր չես իփե:

Կասի. - Վալա՛. էսօր խիվանդ ի, չկարցա:

Ըմեկել օր դեոր կուգյը Մեշա Սոքանին:

Մեշա Սոքան առատուն շոտ կէլնի թըդըրյուքյ կտիսնա. որ փիլավ իփե, իրիկուն ախպերներ գյըն ուտեն:

Ընորն էլ ըսկուն կէլնի. Ջան Պոլատ էլ մ'էլ կուգյը փլավն կուտի, կէրթը:

Դեոր կուգյը Զնջիլ Կոանին:

Ընորն էլ ըսկուն կէլնի:

Էն մեկէլ օր դեոր կուգյը Ասլան օղլուն:

Ասլան օղլին կասի. - Դե՛, ախպերներ, դե տյուք կնըցեք նեճիր, ես էսօր իշալլաճ, փլավ պիտի իփեմ, իրիկուն տյուք գյըք ուտեք:

Ամա Ասլան օղլին կիտի գյործի էութեն:

Ախպերներ առատուն կէրթըն դաշտ. էն կպառկի, կքյնի չյուր իրիյվան գյըխ: Իրիկուն կէլնի պղինձ կթըլի վեր օճխին, վլյավ կիփի: Փլավ կառնի իփել-չիփել. կտիսնա Ջան Պոլատ էն թըրըֆեն կուգյը:

* Կով խեղդող (Ծ.Բ.)

** Անտառ քանդող (Ծ.Բ.)

*** Շղթա կտրող (Ծ.Բ.)

Կուգյմ կասի. - Կտորմ փլավ տուր ուտեմ, էրթամ:

Ասլան օղլին պղնձից կխանի էրկու փլավի թմքյ խատ, կտնի շիրիփի մեչ, կպարգի Ջան Պոլատին:

Ջան Պոլատի ջին կուգյմ, կանի, որ պիտի զանի, Ասլան օղլին ճամա շիրեփ կվերուցի, կզմնի մեչ դնու գյլխուն, դնու խելքյ կէրթմ:

Ասլան օղլին թուր մեչքեն կխանի. Ջան Պոլատի յոթ գյլոխն էլ կկտրի: Գյլխներ կտանի կթալի. ջմնդակն էլ կտանի կթալի ուր ախպերներաց ճամխի վերվի. գյետի վերեն կանի կարմունջ:

Իրիկուն ի: Ախպերներ կուգյմն. զատամանց կտիսնան կասեն. - Վա՛խ, Ջան Պոլատն իկե, Ասլան օղլուն սպանե, իկե պառկե վեր ճամխին. որ մե էլ սպանի:

Կէլնեն ուշիկ-ուշիկ կուգյմն, կմոտոխանան, կտիսնան, որ վզեր կտրուկ, խատուկ ինգյե էնտեղ:

Կուրախնան, կուգյմն տուն: Կնստեն փլավ կուտեն, էն գյմխ Ասլան օղլին կասի. - Վալա՛. ախպերնե՛ր. ես էսա Ջան Պոլատի ապով ի իկե. էն իմ ախպորկին պիրիր էր, ես իկեր եմ, որ իմ ախպորկին կնդնեմ, առնեմ էրթմմ: Մկա էն դնն սպանեցի, մնաց էրթմլ, էնոր տուն կնդնել:

Ախպերներ կասեն. - Մենքյ էլ կուգյմնքյ խե քյե:

Կէլնեն չորս մեյ տեղ կէրթմն: Կէրթմն, կտիսնան դնու վեց գյլոխն մնացե, մեյ գյլոխ կլորվելեն-կլորվելեն կնացե: Էնոր արնի դամղի խետ կէրթմն: Կտիսնան գյլոխն ինգյե մեյ խատ խորի մը մեչ: Իրեքյ ախպեր գյուվմմիշ չեն էլնե մտնե. Ասլան օղլին կասի. - Ջի կախեքյ, ես մտնեմ:

Կկախեն Ասլան օղլուն խորին մեչ: Ասլան օղլին կէճնի լեոս աշխարմ, կտիսնա դնու քյեոշ սարեն չանգյ թակավորու քյեոշկ սարեն էլ խորոտ ի, կմտնի ներս, մեյ խատ էօդի տյուտ կպմնա, կտիսնա ախպոր կին նստե դմ. չորս խատ էլ խուտնի խրեղեն ախչիկ խետ:

Տեքյր, ախպորկին կճանչնան, մեյ մեկէլու վերեն կուրախնան, Ասլան օղլին կդառնա թեխ էմէկէլ ախչկներ, կասի. - Տյուքյ վի՞ր ախչկներն եքյ:

Կասի. - Վալա՛, մենքյ փլան թակավորու ախչկներն ինքյ, չորսս էլ քյոր ենքյ: Ջան Պոլատ լսավ մեր խորոտկութեն, էկմվ իզարկ մեր խեր սպանեց. մեր մեր սպանեց, մեր ախպերներ սպանեց, մե առեց փախավ, իպե իտիր ըստեղ: Էսա քսան տարի եի, որ էսա տեղն ենքյ: Նոր քյո ախպոր կին իպե, էսա չորս խինգյ օր ի կուրիսե. չենքյ կիտե դժ՞ր ի:

Էնտեղ Ասլան օղլին մեկիկ-մեկիկ կպատմի՝ ըսճա էլմվ, ըսճա կնմց, ես Ջան Պոլատ սպանիր եմ:

Ջան Պոլատի կիյճտերաց պստիկ քյոր, որ շատ խորոտի, ճաման կթռնի Ասլան օղլու ճակատ կպաքյի, կասի. - Որ ըսկնա ի, զի տար քյե խամար:

Կասի. - Աղե՛կ, տյու իմն ես, էնա զաթի իմ ախպոր կին ի, զի իրեքյ խատ էլ ախպեր կա վեր խորի պենին: Էլնենքյ տյուս, նոր փայ պաժին կանենքյ վեր էնոնց:

Կէլնեն կուգյմն խորի պենի մռմճ, ախպերներ չվան կկախեն, խինգյին էլ կքյմշեն տյուս: Ասլան օղլին էլ կքյմշեն տյուս: Ասլան օղլին, որ կէլնի տյուս, չորս քյուրերաց ճոչն կուտա Ինմգյ Բոդմնին, էնորից պստիկն կուտա Մեշմ Սոքանին, պստկից ճոչն կուտա Ջնջիլ Կոանին, պստիյն էլ կառնի ուր:

Ախպերներաց կասի. - Ախպերնե՛ր, դե չյուր էսօր ախպերութեն արինքյ, էսօրից սորա էլ խերիքյ ի, առեքյ ծեր կիյճտեր, կնացեքյ ծեր տներ:

Էնոնքյ կառնեն ուրենց կիյիտեր. կէրթան: Ասլան օղլին կառնի ուր կնիկ, ախպոր կնիկ, կուգյա դներաց մոտ: Էն օր քյառսուն օր կթմմեր: Դներ որ տեսան Ասլան օղլին չէկավ՝ սլտրվան, որ նախրչու լաճուն ուտեն, ճոչ պղինձ ճյուր եոցուցիր են, ճա ճա Ասլան օղլու գյալուն կաշքեն. թե չէ՝ ախպերն կխճեն էն ճրի մեչ:

Պստիկ դև կէլնի տյուս, կտիսնա. որ էն դիճեն Ասլան օղլին կուգյա՛: Աջալս՛ կուգյա՛ ախպերներաց խաբար կպիրի. կասի. - Ասլան օղլին էկավ, էլեքյ պղինձ տարեքյ թափեքյ:

Կէլնեն պղինձ կտանեն կթափեն: Ասլան օղլին կուգյա: Դներ կտիսնան, որ ուրենց քյորն էլ ի պիրե, կուրախնան վեր մեյ մեկէլու: Ասլան օղլին քյանիմ օր կմնա էնտեղ, կուտեն. կխմեն. քյեֆ կանեն, կառնի ուր կնիկ, ուր ախպոր կին, էննն ուր ախպեր, կէրթա կէճնի նախրչու տուն:

Էնտեղ նոր ուրենց խամար խարսնիս կանեն: Ասլան օղլին կփսակեն: Ասլան օղլին դևու տնից պիրած աճաքին խարստութունով ուր տուն տեղ կշինի, խետ նախրչուն մեյտեղ կուտեն. կխմեն. կխասնեն ուրենց մուրազին:

